ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 նոյեմբերի 2019թ. թիվ 645-Ա

«ՎԱՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ
ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ
ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 417-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասով, 67-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «ը» ենթակետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1425-Ա որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերության, ՀՀ Լոռու մարզպետի 2019թ. նոյեմբերի 8-ի թիվ 636-Ա որոշման 2-րդ կետի՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «Վանաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 5,553,390,000 ՀՀ դրամ կազմող կանոնադրական կապիտալը նվազեցնել 29,050,000 ՀՀ դրամով՝ բաժնետոմսերի մարման միջոցով: Նվազեցումից հետո կանոնադրական կապիտալը սահմանել 5,524,340,000 ՀՀ դրամ:

2. Հաստատել կանոնադրության փոփոխությունը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2011 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 417-Ա որոշմամբ հաստատված «Վանաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 5,524,340,000 (հինգ միլիարդ հինգ հարյուր քսանչորս միլիոն երեք հարյուր քառասուն հազար) դրամ, որը կազմում է 552,434 (հինգ հարյուր հիսուներկու հազար չորս հարյուր երեսունչորս) հատ 10,000 (տասը հազար) դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

Ընկերության կողմից թողարկված բոլոր 552,434 բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են, ոչ փաստաթղթային»:

3. Հանձնարարել «Վանաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ դիմել պետական ռեգիստրի գործակալություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման համար:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Մխիթարյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. նոյեմբերի 13
ք.Վանաձոր